

ՈՒԻԼԻԸՄ ՍԱՐՈՅԵԱՆԻ ԿԵԱՆՔԻ ՎԱԽԵՐԱԳՐԱԿԱՆ ԺԱՊԱԻԷՆԸ

Շարաթ Երեկոյեան, Սամաթիոյ Սահակեան Սանուց Միութեան սրահին մէջ ցուցադրուեցաւ Հոչակաւոր բեմադրիչ Փոլ Գալինեանի գործերէն «Ուիլիլիմ Սարոյեան, Մարդը, Գրողը» ժապաւէնը: Ինչպէս ծանօթ է, այս ձեռնարկին կը սպասուէր Հետաքրքրութեամբ: Երեկոյթը Հովանաւորեց Ամեն. Ս. Գատրիարք Հայրը: Բացման խոսքով Հանդէս եկաւ Սահակեան Սանուց Միութեան Վարչութեան Ատենապետ Տիգրան Ալթուն: Փոլ Գալինեանի կենսագրութիւնը ներկայացուցին Խաչիկ Մարտիրեան եւ Լիզա Մէլլիլիէր:

Այս բացումէն վերջ, ներկաները դիտեցին Սարոյեանի կեանքին վերաբերեալ այս վաւերագրական ժապաւէնը: Ծուցադրութեան աւարտին, Փոլ Գալինեան պատասխանեց նաեւ կարգ մը Հետաքրքրիչներու Հարցումներուն: Երեկոյթի նախաձեռնարկներուն անունով, Ամեն. Ս. Գատրիարք Հայրն ալ յուշանուէր մը յանձնեց իրեն:

Յայտագրի աւարտին, սարգուսեցաւ ընդունելութիւն մը, որու ընթացքին ներկաները ջերմօրէն շնորհակատեցին տաղանդաւոր վարպետ Փոլ Գալինեանը, որու Հետ ունեցան Հանելի գրոյց: Նորին Ամենապատուութիւնն ալ երկար գրուցեց Սփիւռքահայ արժէքաւոր գեղարուեստական գործիչ Փոլ Գալինեանի Հետ:

Ակնյայտ է, որ Փոլ Գալինեանի այս գործը ցայտօր ամէնուրեք ստեղծած է մեծ արձագանգ եւ արժանացած՝ բոլորի գնահատանքին: Փոլ Գալինեան, չուրջ քառասուն տարիներու լուսանկարիչի իր փորձառութեամբ եւ շարժանկարի արուեստին Հմուտ ու վկայեալ արուեստագէտ, Ամերիկահայ գրող ու իր գրական գործերով Համաշխարհային դէմք մը դարձած՝ Ուիլիլիմ Սարոյեանին Հանդէպ իր սէրն ու Հիացումը գործնական, շօշափելի դարձնելու իր գծով տարւած, անոր մասին պատրաստած է այս վաւերագրական ժապաւէնը: Այս գործը այնքան յաջող է իր նկարներով, ներկայացման ձեւերով, երաժշտութեամբ ու արուեստի բախնդրութեամբ, որ միջազգային վաւերագրական ժապաւէններու փառատօներուն մասնակցելով շահած է վեց մը ցանակներ: Այս վեց մրցանակներէն Հինգը ստացած է ժապաւէնին Հեղինակը, իսկ մին՝ երաժշտութեան Հեղինակը:

1994-ի Ապրիլին, Հիւսուրնի 27-րդ Միջազգային Ֆիլմերու Փառատօնին, 57 վաւերագրական ժապաւէններու կարգին Գալինեանի գործը շահեցաւ երրորդ մրցանակը: 1995-ի Յունիսին, այս գործը ցուցադրուեցաւ Մոնթրէալի միջազգային Ֆիլմերու սրահին մէջ: Յաջորդ ամսուն, Ֆիլաւէլֆիոյ 18-րդ Միջազգային Ֆիլմերու Փառատօնին Փոլ Գալինեանի գործը տիրացաւ ոսկի

մրցանակի, վաւերագրական լաւագոյն ժապաւէնը դասուելով մասնակից տասներկու ազգերու կարգին: Նոյն տարուան Հոկտեմբերին, Գոլոմպոսի 43-րդ Միջազգային Ֆիլմերու Փառատօնին, 80 գործերու կարգին, երեք մրցանակներու արժանացաւ Սարոյեանի կեանքի վաւերագրականը: Առաջին երկու մրցանակները լաւագոյն ճանաչումի արժանիքով՝ արուեստի ու մարդասիրական բաժնէն ներս, իսկ երրորդը՝ պատուական յիշատակումի արժանիքով էին, ժապաւէնի պատմագրութեան տեսակէտէ: 1996-ի Յունիսին, Ֆիլաւէլֆիոյ 19-րդ Միջազգային ժապաւէնի Փառատօնին, այս գործի երաժշտութեան Հեղինակը՝ Փոլ Նազլիկեան շահեցաւ պատուական յիշատակումի արժանիքով մրցանակ, 22 ժապաւէններու կարգին:

Սարոյեանի մասին Գալինեանի պատրաստած վաւերագրական այս ժապաւէնը ուշադրութիւնը գրաւեց նաեւ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ), իբրեւ դաստիարակչական միջոց, որպէսզի Հայ ժողովուրդը աւելի մօտեցնէ Սարոյեանի կեանքին ու գործին: ՀԲԸՄ-ի Հովանաւորութեամբ, այս միութեան աշխարհացրիւ մասնաճիւղերէն ներս կազմակերպուած ցուցադրութիւններով Համաշխարհային շրջապատումը կատարեց Գալինեանի գործը: Այս կէտին վրայ պէտք է նշել, թէ Իսթանպուլի մէջ կատարուած այս ցուցադրութեամբ նոր տղակ մը աւելցաւ այս շղթային վրայ: Փոլ Գալինեան եւ իր կողակիցը՝ Արաքսի Գալինեան գնահատեցին ՀԲԸՄ-ի այս ծրագիրը եւ որոշեցին ցուցադրութիւններուն Հասոյթը նուիրել ՀԲԸՄ-ի: Խնդրոյ առարկայ շրջապատումը նկատ էր 1995-ի Դեկտեմբերին: Գալինեանները Միացեալ Նահանգներու, Գանատայի եւ Աւստրալիոյ նման երկիրներէ ներս, չուրջ տասներեք քաղաքներու մէջ ներկայ եղած են ժապաւէնի ներկայացումներուն: Հոն ուր այս ժապաւէնը ներկայացուած է, մեծ խանդավառութիւն ու Հետաքրքրութիւն յատուկ եկած է Ուիլիլիմ Սարոյեանի նկատմամբ, թէ՛ Հայ եւ թէ՛ օտար շրջանակներէ ներս: Այս Հետաքրքրութիւնը զգալի եղած է նաեւ Հայ նոր սերունդին մօտ:

Իսթանպուլի ցուցադրութեան պարագային ալ, նախորդներէն նուազ չէր Հետաքրքրութիւնը, որ կրկնապատկուեցաւ աշխարհահռչակ լուսանկարիչ Արա Կիւլէրի գործերու ցուցադրութեամբ: